



Web: [www.aarhus.am](http://www.aarhus.am)  
E-mail: [blejanli@gmail.com](mailto:blejanli@gmail.com), [aarhusnews@gmail.com](mailto:aarhusnews@gmail.com)  
Mob: 077 76 46 41

N AA-006

11-ը սեպտեմբերի 2015թ.

ՀՀ ֆինանսների նախարար  
պարոն Գագիկ Խաչատրյանին

Հարգելի պարոն Խաչատրյան,

Ս.թ. օգոստոսի 18-ին մենք նամակ ենք հղել Ձեզ՝ ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիայի ներքո ազգային մակարդակով սահմանված նախատեսվող գործողությունները հաստատելու մասին» որոշման նախագծի «Ֆինանսներ» հատվածի առաջին ենթակետով նախատեսված կլիմայական քաղաքացիական շրջանառու հիմնադրամ ստեղծելու առաջարկի և «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի վերաբերյալ՝ հայտնելով մեր անհամաձայնությունը ՀՀ ֆինանսների նախարարության դիրքորոշման հետ և պահանջելով վերնայել Ձեր ղեկավարած կառույցի տեսակետն ու դիրքորոշումը:

Օգոստոսի 27-ին մենք ստացել ենք մի պատասխան, որում նշվում է, որ Ձեր դիրքորոշումը հայտնվել է ՀՀ բնապահպանության նախարարությանը և նախագծերի վերաբերյալ այլ առաջարկություններ չունեք:

Հարգելի պարոն նախարար, մենք Ձեզանից առաջարկներ չենք խնդրել, մենք ինքներս ենք առաջարկ ներկայացրել՝ պահանջելով վերանայել Ձեր ղեկավարած կառույցի տեսակետը և դիրքորոշումը: Դուք կարող եք Ձեր տեսակետը հիմնավորել և մերժել մեր առաջարկը կամ այն ընդունել: Բայց Ձեր պատասխանն ըստ էության չի պարունակում մեր առաջարկի վերաբերյալ Ձեր կայացրած որոշման մասին տեղեկատվություն:

Այդ պատճառով մենք ևս մեկ անգամ պնդում ենք մեր անհամաձայնությունը ՀՀ ֆինանսների նախարարության դիրքորոշմանը և պահանջում ենք Ձեր ղեկավարած կառույցի տեսակետի և դիրքորոշման վերանայում:

Մեր ներկայացրած առաջարկի վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարությունից ակնկալում ենք ստանալ պատշաճ պատասխան և հիմնավորում՝ Ձեր կողմից այդ առաջարկը մերժելու կամ ընդունելու վերաբերյալ:

Հարգանքով՝ Հայաստանի Օրհուս կենտրոններ.

Ալավերդու Օրհուս կենտրոն

*Անուշ Էփոյան*

Ապարանի Օրհուս կենտրոն

*Նատալյա Մանուկյան*

Արարատի Օրհուս կենտրոն

*Հռիփսիմե Մարգարյան*

Գավառի Օրհուս կենտրոն

*Լիաննա Ասոյան*

*Մարինե Մազմանյան*

Գյումրու Օրհուս կենտրոն

*Գևորգ Պետրոսյան*

Դիլիջանի Օրհուս կենտրոն

*Ալբերտ Հարոյան*

Եղվարդի Օրհուս կենտրոն

*Ռուզաննա Մանյան*

*Անուշ Բեյրության*

Երևանի Օրհուս կենտրոն

*Միրվա Արվազյան*

Իջևանի Օրհուս կենտրոն

*Դավիթ Ղազարյան*

Կապանի Օրհուս կենտրոն

*Աշոտ Ավագյան*

Հրազդանի Օրհուս կենտրոն

Անահիտ Մնացականյան

Ժորա Ատաբեյան

Ստեփանավանի Օրհուս կենտրոն

Մանյա Մելիքանյան

Վանաձորի Օրհուս կենտրոն

Պերժ Բոջուկյան

Հայաստանի Օրհուս կենտրոնների տեղեկատվության  
պատասխանատու

Մարի Զաքրյան

